ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 9 մայիսի (ՏԱՍՍ)։ Լեռնային Ղարաբաղի տարածքում հունվար-ապրիլին հաստատված հարաբերական անդորրի մթնոլորտին նորից փոխարինեց լարվածությունը։ Վերջին ժամանակներս հաճախակի են դարձել կոնֆլիկտները ազգամիջյան հողի վրա, հայ և ադրբեջանական բնակչության կողմից փոխադարձ վիրավորանքների ու սպառնալիքների դեպքերը, այն փաստերը, երբ ճանապարհներին քարեր են նետվել Ադրբեջանից կամ Հայաստանից մեկնող մարդատար մեքենաների ու ավտոբուսների վրա։

Այսպես, մայիսի 5-ին Ստեփանակերտի արվարձան Կըրկըժան ավանի մոտ երեք հայեր ծեծկոտուքի մեջ են մտել ադրբեջանցիների հետ, որին այնուհետև մասնակցել է մոտ 200 մարդ։ Կռիվը կանգնեցնելու համար նախազգուշական կրակոցներ են կատարվել օդ։ Միլիցիայի և ներքին զորքերի կարգախմբերը վերականգնել են կարգուկանոնը, սակայն դրա ընթացքում վընասվածքներ են ստացել երեք քաղաքացիական անձ և չորս զինծառայող։ Վնասվել են երեք ավտոմեքենա և մեկ մոտոցիկլ։ Այդ փաստի առթիվ քրեական գործ է հարուցվել։

Մայիսի 6-ին անցնող «Ժիգուլիից» նետված քարերով փըշըրվել են Երևան-Մարտունի երթուղու միջքաղաքային «Իկարուսի» ապակիները։ Այդ մարդատար ավտոմեքենայի ադրբեջանցի վարորդի և երկու ուղևորների դեմ խուլիգանության քրեական գործ է հարուցվել։ Այդ նույն օրը անհայտ անձինք Շուշիի շրջանում վընասել են կապի բազմականալ կաբելը։

ԼՂԻՄ-ի որոշ բնակավայրերում ազգամիջյան երկպառակության այս և ուրիշ դրսևորումները տեղի են ունենում Ստեփանակերտում և մասամբ շրջկենտրոններում շարունակվող գործադուլի պայմաններում։ Ընդ որում Ստեփանակերտի ձեռնարկություններում ու հիմնարկներում աշխատանքի չեն թողնում ադրբեջանական ազգության բանվորներին ու ծառայողներին, իսկ հայազգի անձինք վախենում են աշխատել Շուշիում։ Գործադուլներն ընդգրկել են արդյունաբերական ձեռնարկությունները, կառույցները, մասամբ ավտոմոբիլային տրանսպորտը, որոշ հիմնարկներ։ Շարունակում են գործել կենսապահովման ձեռնարկությունները, բուժական հիմնարկները, կապը։ Շուշիի շրջանում, մարզի կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում հիմնականում պահպանվում է նորմալ աշխատանքային ռիթմը։ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն բոլոր միջոցները ձեռնարկում է բնակչությանը պարենամթերք ապահովելու համար։

Գործադուլների հիմնական առիթը, նրա մասնակիցների հայտարարության համաձայն, ադրբեջանական գյուղերում արդյունաբերական և սոցիալ-կենցաղային օբյեկտների ապրագացված շինարարությունն է, այնինչ մարզի հայկական բնակավայրերում այն չի կատարվում։ Իսկ իրականում, 1989 թվականի պլանի համաձայն, ԼՂԻՄ-ում շինարարության ծավալը կազմում է 96 միլիոն ռուբլի, այդ թվում ադրբեջանական բնակավայրերում՝ 4 միլիոն ռուբլի։ Հատուկ կառավարման կոմիտեն կուսակցական և խորհրդային մարմինների ղեկավարների հետ համատեղ վերանայել է արտադրանային օբյեկտների կառուցման ցուցակը։

Կրքերը բորբոքեցին նաև մասսայական ինֆորմացիայի տեղական և հանրապետական միջոցների մի շարք հայտարարություններ, մասնավորապես ինքնավար մարզի իբր տեղի ունեցող «ադրբեջանականացման» մասին։ Հայկական կողմը երկյուղում է, որ այդ պրոցեսի հետևանքով ժողովրդագրական իրավիճակը կփոխվի հօգուտ ադրբեջանական կողմի։

Գաղթականների պրոբլեմը մնում է որպես բնակչության գրգռման առավել սուր աղբյուր։ Ստեփանակերտում գաղթականների քանակը հասնում է տեղաբնիկների թվի 20 տոկոսին, իսկ ամբողջությամբ վերցրած մարզում՝ 10 տոկոսին։

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության զգալի մասը անվստահություն է հայտնում Հատուկ կառավարման կոմիտեին, պահանջում է վերականգնել իշխանության մարզային մարմինները, ինչպես նաև ԼՂԻՄ-ը փաստորեն դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ-ի ենթակայությունից։ Այդ մասին ասվում է նաև Մ. Ս. Գորբաչովին հասցեագրված բաց նամակում, որն ստորագրել են կուսակցության քաղկոմի և շրջանային կոմիտեների առաջին քարտուղարները, քաղշրջգործկոմների նախագահները (բացի Շուշիի) և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների մի մասը։ Դիմումը հրապարակվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում։ Այն բանից հետո, երբ իրադրությունն սկսեց շիկանալ, նրանք նաև ստորագրեցին Լեռնային Ղարաբաղի աշխատավորությանն ուղղված դիմում, որով բնակչությանը կոչ են անում հանդես բերել զսպվածություն ու հանգստություն և ընդգծում են, որ միայն խաղաղ ուղիների որոնումը, համբերությունն ու զսպվածությունը «կարող են հանգեցնել մեր ժողովրդի իղձերի իրականացմանը»։ Ամեն մի հակաօրինական գործողություն, անկարգություն կարող են անուղղելի .վնաս հասցնել մեր երեխաների, հարազատների ու մերձավորների կյանքին ու առողջությանը, ասվում է դիմումի մեջ։ Սակայն ավելի ու ավելի բարձր են հնչում նաև անորոշ ժամկետով գործադուլը շարունակելու, այն «քաղաքացիական անհնազանդության կամպանիայի» վերածելու ձայները։

Ուշադրության առնելով այն հանգամանքը, որ մարզի հայ բնակչության մեծամասնության մեջ պահպանվում է լարվածությունը, և ադրբեջանական բնակչությունը նույնպես գրգռված է, ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն և հատուկ շրջանի զինվորական պարետությունը վճռական միջոցներ են ձեռնարկել հասարակական կարգի պահպանումը ուժեղացնելու, ազգամիջյան երկպառակության հողի վրա ընդհարումները կանխելու և խափանելու, քաղաքացիների անվտանգությունն ապահովելու նպատակով։ Այդ միջոցառումներից են Ստեփանակերտ քաղաքում և հատուկ շրջանի շրջկենտրոններում պարետային ժամի երկարացումը, ճանապարհներին հսկողության ուժեղացումը, զինվորական ստորաբաժանումների միջոցով հայկական և ադրբեջանական բնակավայրերի կցասահմանների հսկողությունը։ Հատուկ շրջանի իրավապահ մարմիններն ու ներքին զորքերի անձնակազմը ամեն ինչ անում են մարդկանց անվտանգությունն ապահովելու համար։ Ինչպես ՏԱՍՍ-ի թղթակցի հետ զրուցելիս ասաց ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին, երբ երեխաների, կանանց ու ծերունիների կյանքը վտանգի մեջ է, պետությունը չի կարող անտարբեր մընալ։ Այժմ սա առավել կարևոր խնդիրն է։

Իրադրությունն ընդհանուր առմամբ վերահսկվում է, թեև դեռևս լարված է ու բարդ։

«Պրավդա», 1989 թվականի 10-ը մայիսի